

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

30.04. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Ա. Չիլինգարյան, Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ս. Ներսիսյան (*Մարդահամարի վարչության պետ*), Կ. Կույունջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ջ. Ավոյան (*Զբաղվածության և աշխատանքի վարձատրության բաժնի պետ*), Ջ. Սիրզոյան (*Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում՝ յոթ հարց.

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «2000 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան/

2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին ՀՀ 2001թվականի Մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների պետերի մարդահամարի գծով տեղակալի պարտականությունները հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

4. Հ. 1 բնակֆոնդ ձևի հավելված «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» հաշվետվական ձևը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

5. «Հաշվետվություն արտակարգ իրավիճակների մասին» Ձև 1-արտակարգ պետական վիճակագրական հաշվետվային ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն վիճակագրական ծառայություններում «Ազգային հաշիվների համակարգի տվյալների հավաքագրման, մշակման, ստուգման համար գործող ծրագրային փաթեթների» շնորհանդեսին նվիրված սեմինարին մասնակցության վերաբերյալ (2001թ. փետրվարի 26-ից 28-ը, Լյուքսեմբուրգ)

/Ներկայացնող՝ Ջ. Սիրզոյան/

6.2 Հաշվետվություն 2001թ. մարտի 5-9-ը Հելսինկիում «Աշխատուժի ընտրանքային հետազոտություններ» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ջ. Ավոյան/

6.3 Հաշվետվություն 2001թ. մարտի 23-ին ՄԱԿ-ի վիճակագրության բաժին (UNSD), մարտի 26-28-ը ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրո (US Census Bureau) կատարած այցելության և 2001թ. մարտի 29-31-ը Ամերիկայի Բնակչության ասոցիացիայի հանդիպումներին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան, Ա. Սաֆյան/

6.4 Հաշվետվություն 2001թ. մարտի 12-13-ը Սկոպյե քաղաքում (Մակեդոնիա), Եվրոստատի կողմից կազմակերպված վիճակագրական տվյալների գաղտնիություն թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու և 2001թ. մարտի 14-16-ը, Սկոպյե քաղաքում (Մակեդոնիա), վիճակագրական տվյալների գաղտնիություն թեմայով աշխատանքային համաժողովին մասնակցելու վերաբերյալ

/Ներկայացնող՝ Վ. Դավթյան, Ա. Կոստանյան/

7. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «2000թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան/

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ-ն, համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2000թ. աշխատանքային զործունեությունը ծավալել է «2000թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» համաձայն: ՀՀ ԱՎԾ-ում վիճակագրական աշխատանքները տարվում են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» համապատասխան: 2000թ. կատարված աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածների, ինչպես նաև «2000թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» կառուցվածքին համապատասխան:

Ձեկուցողը նշեց, որ փաստաթղթում հարկ է կատարել խմբագրական բնույթի մի շարք փոփոխություններ, միաժամանակ առաջարկելով փոփոխություն կատարել նաև փաստաթղթի վերնագրում, այն է՝ ««2000թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» կատարման մասին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվությունը»:

Որոշեցին՝ հաստատել «2000 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» կատարման մասին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվությունը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին ՀՀ 2001թվականի Մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

Նշվեց, որ ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացված փաստաթուղթը փորձաշրջան է անցել ՀՀ 2000 թվականի փորձնական մարդահամարի ժամանակ, արդյունքները դրական են, ուստի կատարված են որոշ մասնակի խմբագրական բնույթի և ժամկետների առումով փոփոխություններ:

Որոշեցին՝ հաստատել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին ՀՀ 2001թվականի Մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգը :

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների պետերի մարդահամարի գծով տեղակալի պարտականությունները հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

Նշվեց, որ ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար ՀՀ ԱՎԾ-ի մարզային (տարածքային) վարչությունների (բաժինների) պետերին աջակցելու նպատակով հարկ է ժամանակավորապես ներգրավել մարդահամարի գծով տեղակալներ, որոնք աշխատելու են պայմանագրային հիմունքներով: Ներկայացված փաստաթուղթը կոչված է կանոնակարգելու նրանց պարտավորությունները և աշխատանքների ընթացքը:

Դիտողություններ և առաջարկություններ

Ա. Չիլինգարյան (առաջ.) – քանի որ նշված տեղակալները աշխատելու են պայմանագրային հիմունքներով, ապա նրանք չեն կարող կատարել գործառնական պարտականություններ՝ ուստի հարկ է փաստաթղթի վերնագրում և տեքստում «պարտականություն» բառը փոխարինել «պարտավորություն» բառով. (ընդունվեց)

Ս. Մնացականյան (առաջ.) – հաշվի առնելով նշված աշխատանքների կատարման համար տեղակալների վարձատրման աղբյուրի ոչ բյուջետային լինելը (վերջիններս վարձատրվելու են միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներից), հարկ է «տեղակալ» բառից հետո ավելացնել «խորհրդական» բառը:

Որոշեցին՝ «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների պետերի մարդահամարի գծով տեղակալ-խորհրդականի պարտավորությունները» փաստաթղթի, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հ. 1 բնակֆոնդ ձևի հավելված «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» հաշվետվական ձևը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

Նշվեց, որ ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթում «Տնային տնտեսության բնակարանային և բնակության պայմանները» բաժնում բազմաբնակարան շենքերում տնային տնտեսությունների համար հավաքագրվող տեղեկատվության ճշգրտությունն ապահովելու նկատառումով հարկ է մարդահամարի նախապատրաստման ընթացքում մինչև 2001թ. հունիսի 1-ը ստանալ տեղեկատվություն ՀՀ բոլոր բազմաբնակարան շենքերի վերաբերյալ, ինչին և նպատակաուղղված է ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացված հաշվետվային ձևը:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ա. Չիլինգարյան (առաջ.) - փաստաթուղթը Հ. 1 բնակֆոնդ հաշվետվային ձևի հավելվածից վերածել ինքնուրույն հաշվետվային ձևի՝ կատարելով բոլոր անհրաժեշտ փոփոխությունները. (ընդունվեց)

Յու. Պողոսյան (առաջ.) - անվանումը դարձնել ««Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» Հ. 1 բնակբնութագիր պետական վիճակագրական հաշվետվային ձև» և համապատասխան լրացման կարգի մասին Հրահանգ. (ընդունվեց)

Որոշեցին՝ հաստատել «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» Հ. 1 բնակբնութագիր պետական վիճակագրական հաշվետվային ձևի և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգի, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

/Քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. «Հաշվետվություն արտակարգ իրավիճակների մասին» Ձև 1-արտակարգ պետական վիճակագրական հաշվետվային ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

Նշվեց, որ ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացված պետական վիճակագրական հաշվետվային ձևը նախատեսված է հանրապետությունում առաջացած արտակարգ իրավիճակների, դրանց պատճառների և հետևանքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համար: Այն մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության և ՀՀ հիդրոօդերևութաբանության վարչության հետ համատեղ:

Առաջարկություններ և դիտողություններ.

Քննարկումների ընթացքում չհիմնավորվեց նշված հաշվետվային ձևի անհրաժեշտությունը և, հատկապես, ՀՀ ԱՎԾ-ի կողմից արտակարգ իրավիճակների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության ներկայացված կտրվածքով հավաքագրման նպատակահարմարությունը:

Որոշեցին՝ առաջարկել Յու. Պողոսյանին կազմակերպել լրացուցիչ քննարկում ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության մասնագետների հետ արտակարգ իրավիճակների գրանցման իրավական հիմքերի, գրանցամատյանի վարման, ՀՀ ԱՎԾ-ում արտակարգ իրավիճակների հաշվառումն արդյունավետ իրականացնելու հետ կապված հարցերը: */արձանագրային/*

/Քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն վիճակագրական ծառայություններում «Ազգային հաշիվների համակարգի տվյալների հավաքագրման, մշակման, ստուգման համար գործող ծրագրային փաթեթների» շնորհանդեսին նվիրված սեմինարին մասնակցության վերաբերյալ (2001թ. փետրվարի 26-ից 28-ը, Լյուքսեմբուրգ)

/Ներկայացնող՝ Ջ. Միրզոյան/

6.2 Հաշվետվություն 2001թ. մարտի 5-9-ը Հելսինկիում «Աշխատուժի ընտրանքային հետազոտություններ» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ջ. Ավոյան/

6.3 Հաշվետվություն 2001թ. մարտի 23-ին ՄԱԿ-ի վիճակագրության բաժին (UNSD), մարտի 26-28-ը ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրո (US Census Bureau) կատարած այցելության և 2001թ. մարտի 29-31-ը Ամերիկայի Բնակչության ասոցիացիայի հանդիպումներին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան, Ա. Մաֆյան/

6.4 Հաշվետվություն 2001թ. մարտի 12-13-ը Սկոպյե քաղաքում (Մակեդոնիա), Եվրոստատի կողմից կազմակերպված վիճակագրական տվյալների գաղտնիություն թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու և 2001թ. մարտի 14-16-ը, Սկոպյե քաղաքում (Մակեդոնիա), վիճակագրական տվյալների գաղտնիություն թեմայով աշխատանքային համաժողովին մասնակցելու վերաբերյալ

/Ներկայացնող՝ Վ. Դավթյան, Ա. Կոստանյան/

Որոշեցին՝ բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան